

առավարութիւնը վաւերացուցած է իրենց կանոնադիրը :

— Մեծ Դարաքրիստէցի Սարգիս Բէդջանեանց իր ամբողջ Հարստութիւնը կտակած է զիւղաքաղաքի զպրօցին, եկեղեցիին, էջմիածնին եւ Գէորգեան ձեւարանին : Կտակին դումարը դասի տակ դնուելուն՝ դումարին քանակութիւնը յայտնի չէ :

— Կաթողիկոսին Հրաւէրով էջմիածին Հաւաքուած են բոլոր Ռուսայի թեմերէն ներկայացուցիչներ Կովկասայի զպրօցներու միօրինակ ծրագիր մը մշակելու Համար :

— Հոկտ. 20ին Գանձակի մէջ Անդրկովկասի երեք նահանգներու՝ Պաքուի, Երեւանի, Գանձակի Հայ աղաքանկութեան պատգամաւորի ընտրութիւնը Պետական Տումայի Համար կատարուած է եւ ընտրուած՝ Պ. Միքայէլ Պապաջանեան, ընդէ Երեւանցի :

— Պ. Պաւէլ Խուկասեան Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան տարեկան երեք Հազար բուլլէի նպատտ յատկացուցած է, մանկական զրքերու Հրատարակութեան Համար :

— Թիֆլիզի մէջ մօտաւորապէս 30 Հայ զբաղէտներ «Հայ Գրական Ընկերութիւն» անուն ընկերութիւն մը կազմած են, որուն նըպատակը պիտի ըլլայ Հայ զբաղէտներու սընտեսական եւ բարոյական շահերը պաշտպանել : Նոր վարութիւն մըն ալ ընտրած են, Հետեւեալ կերպով.— Պ. Պ. Յովհ. Թումանեան՝ Նախագահ, Տ. Յովհաննէսեան՝ Փոխ-Նախագահ, Բժ. Զարդարեան՝ Գանձապետ, Գիւտըճ. Աղանեան՝ Բարտուղար, Լէօ, Ե. Լալայեան, Ա. Աթանասեան եւ Արշ. Յարութիւնեան՝ պարզ անդամ : Ընկերութիւնը պիտի Հրատարակէ ամսագիր մը իր օրկան ընկերութեան :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՄԵՐ ՅՈՒՅԷԼԵԱՆՐ

Հոկտ. 14ին էջմիածնի մէջ կատարուած է Հոգեհանգիստ մը Համազգային մեծ յորելեանին առթիւ Հայ անմահ զործիչներու յիշատակին :

Նոյն օրը երեկոյին Տեմարանի մեծ դաշլիճին մէջ Հանդիսաւոր երեկոյթ մը տրուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. ի նա-

խաղաչութեամբ եւ մասնակցութեամբ Արեւիսկոպոսներու, Եպիսկոպոսներու եւ վարդապետներու, պատգամաւորներու, Տեմարանի ուսուցչական եւ աշակերտական խումբերու Կաթողիկոսի «Հայր Մեր» արտասանութիւն կողք, Տեմարանի տեսուչ Բազրատ Վարդապետանախօսութիւն մը ըրած է : Տեմարանի ուսուցիչ Ս. Կանայեան կարգացրէ է Տառ մը թէ «Ռբոսդ է Ս. Մեսրոպի քարոզած Մարդ Աշխարհը» :

Ստ. Մալխասեան խօսած է «Ս. Մեսրոպ Տեախլիք» մասին, իսկ Ա. Բալանթար խօսած է «Տառերու զիւտը իրբու վերածնութեան զործօն» նիւթին շուրջ :

Հանդէսէն յետոյ տրուած է նաև ընթերցմը պատգամաւորներու եւ տնին ի պատիւ Բաթակահատերէն կողք, Եւսեան կողմէն իմ յայտնուած է որ յառաջիկայ տարի Հոկտ. 12ին Հայ ժողովուրդը կարողանայ Համազգայնօրէ կատարել մեծ տօնը իսկ զարգացեալ դասակարգը ընայն ժողովրդականացնել նոյն տան մեծ տօնի դադափումը :

Ս. Կաթողիկոսը ստացած է ամէն կողմերէն շնորհաւորական Հեռագիրներ այս տօնի առթիւ :

Հոս կը գետեղենք Ա. Բալանթարի Գէորգեան ձեւարանի մէջ կազմուած երեկոյթին առթիւ արտասանած բանախօսութեան ամփոփումը «Բիւզումի ինն»էն արտագրելով :

«Իմ բանախօսութիւնը նուիրված է զքեզիւսին, իրբու վերածնութեան զործօն մը ազգի կեանքում :

«Հայ զիւր թէ իր երեւալու սկզբնական ժամերում եւ թէ յաջորդ դարերում կատարել է զազախարական վերածնութեան նպատող ազգեցիկ զործօնի խոշոր դեր :

«Հայ այրուերնը ոչ միայն ժողովրդականացրեց Նազովրեցի Մեծ Բարոզիչի վճռունչ ուսմունքը մեր մէջ, այլ եւ ճանապարհացեց բոլոր այն ուսմունքներին Համար որոնց Հասել էին փիլիսոփաները Յունաստանում, Ասորիքում, Եգիպտոսում եւ Հռոմում, մտազործելու Հայ երկրի մէջ եւ ծանօթացնելու մեր ուսումնասանչներին աշխարհի բազմոյ իմաստաւէր մտածողութեան Հետ :

«Այն ժամանակ, երբ Հայ զիւրը գտնեցին, Հին աշխարհը ապրում էր ետուն մտազկեանքով : Այլքսանդրիայի, Աթէնքի, Հռոմի փիլիսոփաները, զիտնականներն ուսումնասիրում էին պատմութիւնը, աշխարհագրութիւ-

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Կ Ի Բ Ա Կ Ի

իրաւարանութիւնը, բարոյադիտութիւնը, սովորութեան էին ենթարկում կրօնական և փիլոսոփայական սխառեմները, ապառիտորանորութիւններ և լուսարանութիւններ: Եւ ինչ ժամանակակից սուրբ հայրերի գրուածքում և ճառերում նշմարում ենք Հնաքերը մտաւոր գործունէութեան, որ անցած էր քրիստոսեցի իւրաքանչիւրը իր նախապատրաստաւորապէս ազգակրօնական տարիներում:

Վերախտարար մեր երկիրը անկարող էր անդիստ սրտով և անդորր կենցաղով ապրել, որովհետեւ Միջին Ասիայից եկող արշաւանքները Հինաստակ էին անում ամեն մի լուսարանական սկզբնաւորութիւն: Բայց երբ լուսարանքների շարանը փոքր ինչ թուլանում էր և մեր երկիրը փոքր ինչ Հանդիստ էր վարելում, նորից սկսվում էր գրերի վերածնող, վերանորոգող, վերակազմող գործը:

«Այդպէս մենք ունեցանք վերածնութեան պայմաններ Բագրատունեաց Հարատութեան ժամանակ, թուրքիկանց և ինչպիսիքներու օրերով, ստանեօթերոց դարի և միլիթութիւնների ժամանակ սկսված խաղաղ գործունէութեան օրերով, Վենետիկի և Վիեննայի միաբանութիւնների Հաստատման և գործունէութեան շրջաններում, Հնդկաստանի, Պոլսի Մոսկովայի լուսարան շարժման սկզբնաւորութեան և Կովկասեան արթնութեան արշալոյսին շարժման օրերում:

«Իրերի դերը վերածնութեան գործում այժմ աւելի քան անցելում ունի խոշորագոյն դպրատանող ճանապարհներ իր սառլ: Նա ունի իր սառլ լուսաւոր մարդկութեան արած նկատական ստալխաղաղութիւնը իբր բոսորանձաննչ մի Հրաշափառ օրինակ:

«Եւ մենք պէտք է ամբողջ մեր եռանդով և ողևորութեան աւելիով բայինք դէպի վերածնութեան այն վեհադոյն անդատանը որ խոստանում է բիրաւոր բեղուն արդիւնքներ յողովրդի Համար:

«Վերածնութիւն ընդարձակ ծաւալով, վերածնութիւն գաղափարական կատարելութեան Համար, վերածնութիւն ժողովրդական բարօրութեան և բարգաւաճման Համար:

«Զգիրը կոչված է այդ վերածնութեան գործը դիրարցնելու և յաշնդեցնելու:

«Ուխտենք գործելու վերածնութեան աշխարհում»:

Պոլսէն կը Հեռագրուի Նոյ. 24 Թուակաճաւ, որ Ֆուսա Փաշա բացորոշապէս յայտնէր է թուրք կառավարութեան թէ Չաթալճայի ամբողջներուն ետին դանուող թուրք զինուորները խղճալի կացութեան մը մէջ կը գտնուին: Ֆուսա Փաշա կը խորհի թէ անոնց ընդդիմութիւնը կարճակեաց պիտի ըլլայ, եթէ Պուլկարները գորաւոր յարձակում մը եւս գործեն Չաթալճայի պաշտպանութեանց դժեւորուն վրայ:

Կը կարծուի թէ Համխիէ թուրք մարտանալին փնտաւելու միջոցին՝ երբ Հարիւր նաւազներ իրենց կեանքը կորսնցուցեր են, սակայն թուրք Կառավարութիւնը կ'ուրանայ:

Համխիէն թուրքերուն ամենէն լաւ մարտանաւն էր, ու անոր անկարողացումը մեծ Հարուած մըն է Օսմանեան նաւատորմիցին: Այս մարտանաւը Քարա-Պուլուսէն կը մեկնէր ամբարիժելու Պուլկար բանակին ձախակողմեան թեւը, երբ երկու Պուլկար խորանկեցներ յարձակեցան անոր վրայ գիշերանց, և փնտաւցին անոր:

Սուլթանը այսօր դիմում ըրաւ Իսայիտ թագաւորին, որպէսզի Մոնթենեկրօի և Սերպիտի թաղաւորները Համոզէ Հաշտարար դիրք մը բռնելու: Միւսնոյն ստեն Սերպիտա ալ Հէլէնա թագուհիէն ինդրեր է, որ Աւստրիական կառավարութեան վրայ իր բարի ազդեցութիւնը գործածէ ի նպատակ Սերպիտ Ազրիականի վրայ նաւահանդիստ մը ստանալուն բաղձանքին:

Եւրոպական ընդհանուր պատերազմի մը կարելիութիւնը դարձեալ սկսած է մտահոգութիւն պատճառել խաղաղասէրներուն: Փարիզէն Հանող լուրերուն Համաձայն՝ մասնաւոր յանձնախումբ մը կազմուած է, որպէսզի գործադուլի միջոցաւ բանակներու փոխադրութիւնը գոժաւարացնելու միջոցներու վրայ խորհի:

Ե Բ Կ Ո Ի Շ Ա Բ Թ Ի

Լընտըն Տէյլի Էֆսիքէտի թղթակիցը, Կիւսթափ Լիոն, կը Հեռագրէ Նոյեմբեր 25 Թուակաճաւ.